ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

«12» 12 2011թ
N 50-Ա/հ
օր.N

«09» 01 2012
N
օր. N

Կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին

ՀՀ Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը, ի կատարումն ՀՀ Կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի N1500-Ն որոշման, ղեկավարվելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ Կառավարության 2002թ հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» N 48 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման» կարգի 34-րդ կետի պահանջներով ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը կառավարական քաղաքային հեռախոսակապով ապահովելու և սպասարկելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդին մատուցում է կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ (այսուհետ «Ծառայություններ»), իսկ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը վճարում է այդ Ծառայությունների դիմաց սույն համատեղ հրամանով սահմանված կարգով:

1.1 Սույն համատեղ հրամանով նախատեսված պահանջները տարածվում են կողմերի միջև 2012թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

2.1 Ծառայությունների որակյալ, անխափան մատուցում և սույն համատեղ հրամանով նախատեսված պարտավորությունների կատարումը,

2.2 Կապի միջոցների անխափան աշխատանքը և վնասվածքների ժամանակին վերացումը,

2.3 ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդում տեղադրված կապի միջոցների և բաժանորդային գծի անվտանգությունն ապահովող հատուկ միջոցառումներ գաղտնի տեղեկատվության արտահոսքը կանխելու նպատակով.

2.4 Կառավարական կապի միջոցների տեղադրումը, վերատեղադրումը և ծառայությունների մատուցումն ու դրանց հետ կապված աշխատանքների կատարումը ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից վճարման պարտավորության մասին գրավոր հայտ ներկայացնելուց հետո.

2.5 Կառավարական քաղաքային հեռախոսակապի անջատումը, եթե ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը չի կատարում Ծառայությունների դիմաց ամենամսյա բաժանորդային վճարումը ըստ սույն համատեղ հրամանի 3.4 և 3.5 կետերի:

3. ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.

3.1 ՀՀ ազգային անվտանգության ծառայության կապի հանգույցից մինչև իր աշխատասենյակները առանձին մալուխային գծի շարքից դուրս գալու դեպքում վերանորոգման աշխատանքների ծախսերը ըստ կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների.

3.2 Կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների կատարումը և այն աշխատասենյակների պահպանումը, որտեղ տեղադրված են այդ միջոցները.

3.3 Իր մոտ տեղադրված կապի միջոցների պահպանումը,

13/01

Ծառայության դիմաց բաժանորդային նախորդ ամսվա վարձի վճարումը ոչ ուշ, քան մինչև ընթացիկ ամսվա 10-ը՝ համաձայն ՀՀ Կառավարության 22.09.2011թ. N1500-Ն որոշման: Վճարումները կատարվում են դրամով հետևյալ կերպ.

| № | ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ | Կառավարական քաղաքային կապ | Ընդամենը |
|---|---|---|---|
| 1 | ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի աշխատասենյակ | 1 x 225 000 | 225 000 |
| 2. | կապի անվտանգության ապահովող հատուկ ծառայություններ | 1 x 100 000 | 100 000 |
| 3. | ընդամենը ամսեկան վարձը | | 325 000 |
| 4. | | | Երեք հարյուր քսանհինգ հազար դրամ |

3.4 Բաժանորդային վճարումների փոխանցումը ՀՀ ազգային անվտանգության ծառայության հաշվարկային հաշվին ամեն ամիս.

3.5 Իր մոտ տեղադրված հատուկ կապի միջոցների վերադարձը ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ տեխնիկապես սարքին վիճակում Ծառայության ծառայությունների վերջնական դադարեցման անմիջապես հետո.

3.6 ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պատճառված կապի միջոցների արժեքի փոխհատուցումը՝ ըստ կազմված համապատասխան ակտի, եթե դրանք կորսվել են ծառայել իր մեղքով:

3.8 Ուժը կորցրած համարել ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի առ 12.04.2010թ.N18-Ա համատեղ հրամանը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն

________________ Գ. Հակոբյան

ք.Երևան 375001, Նալբանդյան 104 ԱԱԾ
ՀՀ ֆին. նախ.գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների բյուջեների
հաշվառման բաժին
հ/հ 900018301011
հվհհ 01507079

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ

________________ Մ.Բադալյան

ք.Երևան, Տերյան 89
ՀՀ ֆին. նախ.գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների բյուջեների
հաշվառման բաժին
հ/հ 900011522092
հվհհ 01541632

Կ.Տ.

[illegible] և տեխնիկական ապահովման վարչություն ________ հեռախոս 1-99